Ինչպես Հավելյալ օգնություն ստանալ՝ Medicare-ի՝ դեղատոմսով բաց թողնվող դեղերի պլանի ծախսերը հոգալու համար

2012թ.

Միջոցների և եկամուտի սահմանափակություն

Սոցիալական ապահովության վարչությունն ու Medicare և Medicaid ծառայությունների կենտրոնները համատեղ աշխատում են՝ Medicare-ի՝ դեղատոմսով բաց թողնվող Ձեր դեղերի պլանի ծախսերի վճարման հարցում Ձեզ Հավելյալ օգնություն տրամադրելու համար: Եթե Ձեր միջոցներն ու եկամուտը սահմանափակ են, ապա Դուք կարող եք հնարավորություն ունենալ ստանալու Հավելյալ օգնություն, որպեսզի վճարեք Ձեր ամսական ապահովագրավճարները, տարեկան պահումները և համավճարները՝ ըստ Medicare-ի՝ դեղատոմսով բաց թողնվող դեղերի պլանի: Հավելյալ օգնությունը հաշվարկված է՝ կազմելու տարեկան մոտ 4,000 դոլար: Ծրագրի պահանջներին Ձեր համապատասխանությունը պարզելու համար Սոցիալական ապահովության վարչությունը պետք է իմանա Ձեր խնայողությունների, ներդրումների, գույքի (բացի Ձեր տնից) արժեքն ու Ձեր եկամուտը: Եթե Դուք ամուսնացած եք և ապրում եք Ձեր կնոջ/ամուսնու հետ, ապա մեզ անհրաժեշտ են ձեր երկուսի տվյալները:

Լրացնելով *Medicare-ի դեղատոմսով բաց թողնվող դեղերի պլանի ծախսերը հոգալու համար Հավելյալ օգնության դիմումը* (ձև SSA-1020)՝ կարող եք հնարավորություն ստանալ օգտվելու Հավելյալ օգնությունից՝ Սոցիալական ապահովության վարչության որոշմամբ: Դիմումի մեջ ընգդրկված հարցերի մեծ մասը վերաբերում է Ձեր միջոցներին և եկամուտին: Սոցիալական ապահովության վարչությունը չի պահանջի Ձեր տրամադրած տեղեկությունների համար ապացույցներ ներկայացնել, փոխարենը դրանք կհամադրի պետական այլ գործակալությունների տրամադրության տակ եղած տվյալների հետ:

Ո՞րն է միջոցների սահմանափակությունը:

Որպեսզի Դուք իրավասու լինեք ստանալու Հավելյալ օգնություն, Ձեր միջոցները չպետք է գերազանցեն 13,070 դոլարը՝ մեկ անձի դեպքում, և 26,120 դոլարը՝ համատեղ ապրող ամուսնական զույգի դեպքում: Միջոցները ներառում են Ձեզ պատկանող իրերի արժեքը: Ահա մի քանի օրինակ.

- անշարժ գույք (բացի Ձեր բնակության հիմնական վայրից)
- բանկային հաշիվներ, այդ թվում՝ հաշվարկային և խնայողական, ինչպես նաև ավանդային վկայագրեր
- բաժնետոմսեր
- պարտատոմսեր, այդ թվում՝ ԱՄՆ խնայողական պարտատոմսերը
- փոխադարձ օգտագործման միջոցներ
- անհատական կենսաթոշակային հաշիվներ (IRA) կամ
- տանը կամ այլուր պահվող կանխիկ միջոցներ

Ինչը միջոց չի համարվում:

Սոցիալական ապահովության վարչությունը հաշվի չի առնի.

- Ձեր հիմնական բնակարանը
- Ձեր անձնական ունեցվածքը
- Ձեր փոխադրամիջոց(ներ)ը
- այն միջոցները, որոնք հեշտ չէ վերածել կանխիկ գումարի, օրինակ՝ ոսկերչական իրերը կամ տան ներքին հարդարանքի պարագաները
- գույքը, որը Ձեզ անհրաժեշտ է տնտեսական ինքնուրույնության համար, օրինակ՝ վարձակալած սեփականությունը կամ հողատարածքը, որտեղ Ձեր անձնական օգտագործման համար բերք եք աճեցնում
- ոչ առևտրային անշարժ գույքը, որն անհրաժեշտ է Ձեր տնտեսական ինքնուրույնության համար
- կյանքի ապահովագրերը
- հուղարկավորության ծախսերը
- միջոցները, որոնք կուտակվել են հուղարկավորության ծախսերի համար նախատեսված գումարից գոյացած տոկոսներից, և
- Ձեր ունեցած որոշակի այլ դրամական միջոցներ հաշվի չեն առնվի ինը ամսվա ընթացքում: Դրանց թվում են.
  - — սոցիալական ապահովության կամ լրացուցիչ սոցիալական եկամուտի (SSI) հետադարձ ուժ ունեցող վճարումները
  - — բնակարանային նպաստը
  - — կանխավճարված և վերադարձված հարկերը՝ կապված եկամտահարկի նվազեցման և երեխայի համար ստացած հարկային հաշվանցումների հետ
  - — փոխհատուցումը, որը Դուք ստանում եք որպես հանցագործության զոհ, և
  - — վերաբնակման հետ կապված օգնությունը, որն ստանում եք նահանգային կամ տեղական կառավարությունից

Այլ միջոցներ բացառելու վերաբերյալ դիմեք Սոցիալական ապահովության վարչություն:

Ո՞րն է եկամուտի սահմանափակությունը:

Հավելյալ օգնության պահանջներին բավարարելու համար Ձեր եկամուտը չպետք է գերազանցի 16,755 դոլարը՝ մեկ անձի դեպքում, և 22,695 դոլարը՝ համատեղ ապրող ամուսնական զույգի դեպքում: Այնուամենայնիվ, նույնիսկ եթե Ձեր տարեկան եկամուտը վերը նշվածից

(շրջել)

բարձր է, Դուք դեռևս կարող եք որոշակի օգնություն ստանալ: Օրինակ՝ Ձեր եկամուտը կարող է ավելի բարձր լինել, եթե Դուք կամ Ձեր կինը/ամուսինը.

- նյութապես օգնում է Ձեզ հետ ապրող ընտանիքի մյուս անդամներին
- հասույթ ունի որևիցե աշխատանքից կամ
- բնակվում է Ալյասկայում կամ Հավայան կղզիներում

Ինչը եկամուտ չի համարվում:

Ոչ բոլոր կանխիկ վճարումներն են համարվում եկամուտ: Օրինակ՝ Սոցիալական ապահովության վարչությունը հաշվի չի առնի.

- պարենային կտրոնների տեսքով ստացած օգնությունը
- բնակարանային նպաստը
- էներգամատակարարման նպաստը
- բժշկական խնամքն ու դեղորայքը
- աղետի զոհերին տրամադրվող օգնությունը
- նվազեցված եկամտահարկի հետ կապված վճարումները
- Ձեր տնային տնտեսության ծախսերը հոգալու համար այլ անձանցից ստացած օգնությունը
- Ձեզ՝ որպես հանցագործության զոհի վճարվող փոխհատուցումները, և
- կրթաթոշակներն ու կրթական դրամաշնորհները:

Այլ եկամուտներ բացառելու վերաբերյալ դիմեք Սոցիալական ապահովության վարչություն:

Ինչպես դիմեմ:

Հավելյալ օգնության համար դիմելը շատ հեշտ է: Պարզապես լրացրեք Սոցիալական ապահովության վարչության՝ *Medicare-ի դեղատոմսով բաց թողնվող դեղերի պլանի ծախսերի համար Հավելյալ օգնության դիմումը* (ձև SSA-1020): Ահա՝ ինչպես.

- դիմեք առցանց՝ ***www.socialsecurity.gov/extrahelp*** կայքէջի միջոցով,
- հեռախոսով դիմելու կամ դիմումի ձև պահանջելու համար զանգահարեք Սոցիալական ապահովության վարչություն՝ **1-800-772-1213** (TTY **1-800-325-0778**) հեռախոսահամարով կամ
- դիմումը լրացրեք Ձեր տեղական սոցիալական ապահովության գրասենյակում:

Կարո՞ղ են արդյոք նահանգային գործակալությունները օգնել ինձ վճարել իմ՝ Medicare-ի ծախսերը:

Երբ Դուք Հավելյալ օգնության համար դիմում եք լրացնում, Դուք կարող եք նաև դիմում ներկայացնել Medicare-ի խնայողական ծրագրերի համար: Դրանք նահանգային ծրագրեր են, որոնք օգնում են հոգալ Medicare-ի մյուս ծախսերը: Սոցիալական ապահովության վարչությունը Ձեր նահանգի կառավարությանը տեղեկություններ կուղարկի, եթե Դուք Հավելյալ օգնության դիմումի մեջ մասնավորապես չխնդրեք, որ այդ տեղեկությունները չուղարկվեն: Ձեր նահանգի կառավարությունը կապ կհաստատի Ձեզ հետ և կօգնի դիմել Medicare-ի խնայողական ծրագրին:

Medicare-ի այս խնայողական ծրագրերն օգնում են սահմանափակ միջոցներով և եկամուտով մարդկանց վճարել իրենց Medicare-ի ծախսերը: Medicare-ի խնայողական ծրագրերն օգնում են վճարել Ձեր Medicare-ի B մասի (բժշկական ապահովագրության) ապահովագրավճարները: Որոշ մարդկանց համար Medicare-ի խնայողական ծրագրերը կարող են վճարել Medicare-ի A մասի (հիվանդանոցային ծախսերի ապահովագրության) ապահովագրավճարները, եթե այդպիսիք կան, և A մասի ու B մասի պահումներն ու համավճարները:

Ինչպես լրացուցիչ տեղեկություններ ստանամ:

Medicare-ի՝ դեղատոմսով բաց թողնվող դեղերի պլանի ծախսերը հոգալու համար Հավելյալ օգնություն ստանալու վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք ***www.socialsecurity.gov/extrahelp*** կայքէջը կամ զանգահարեք Սոցիալական ապահովության վարչություն՝ **1-800-772-1213** (TTY **1-800-325-0778**): Սոցիալական ապահովության վարչության ներկայացուցիչները կօգնեն Ձեզ լրացնել Ձեր դիմումը: Որքան շուտ դիմեք, այնքան շուտ կսկսեք նպաստներ ստանալ:

Եթե Ձեզ անհրաժեշտ են տեղեկություններ Medicare-ի խնայողական ծրագրերի, Medicare-ի՝ դեղատոմսով բաց թողնվող դեղերի պլանների կամ որևէ ծրագրում ընդգրկվելու մասին, կամ եթե ցանկանում եք ստանալ *«Medicare-ը և Դուք»* (*Medicare & You*) ձեռնարկի կրկնօրինակը, ապա այցելեք ***www.medicare.gov*** կամ զանգահարեք **1-800-MEDICARE** (**1-800-633-4227**, հեռատիպ (TTY)՝ **1-877-486-2048**): Ձեր Նահանգի բժշկական ապահովագրության հարցերով խորհրդատվության և օգնության ծրագիրը (SHIP) նույնպես կարող է պատասխանել Medicare-ին առնչվող հարցերին: Ձեր տեղական SHIP-ի հետ կապվելու համար անհրաժեշտ տեղեկությունները կարող եք գտնել Medicare-ի ձեռնարկի ետևում, ինչպես նաև առցանց՝ ***www.medicare.gov*** կայքում՝ Help & Support ցանկի ներքո: Կամ էլ կարող եք հարցնել, երբ կզանգահարեք:

Social Security Administration
SSA Publication No. 05-10115-AM
Getting Extra Help With Medicare
Prescription Drug Plan Costs
Resource And Income Limits (Armenian)
March 2012